ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 2
I ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿ 2
II ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ 5
Առարկայական միջին գնահատականներ և ուսուցչի բնութագրիչներ 5
Կրթության շարունակելիության ապահովում 12
Օլիմպիադաների մասնակցություն և ուսուցչի բնութագրիչներ 20
ՏՎՅԱԼՆԵՐԻ ԲԱԶԱՅԻ ՈՐՈՇ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ 23
III ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ 24

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն հաշվետվությամբ ներկայացվում են ՀՀ ԿԳՆ կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի (ԿՏԱԿ) կողմից հավաքագրված դպրոցների վարկանիշավորման տվյալների երկրորդային վերլուծության արդյունքները: Վերլուծության համար կիրառվել են 2015 և 2016 թվականների վարկանիշավորման տվյալները:

Վերլուծության նպատակն է պարզել աշակերտների կրթական արդյունքի կապը դպրոցական միջավայրի մի շարք գործոնների հետ:

Վերլուծության համար ընտրվել են հանրապետության բոլոր դպրոցները՝ բաժանված ըստ գյուղական և քաղաքային բնակավայրերի: Կիրառվել է կորելացիոն վերլուծության մեթոդ՝ համապատասխան ճշտումներով՝ կապված փոփոխականների բնույթի և բաշխվածության հետ:

Վերլուծության առաջին մասում ներկայացված են փոփոխականները: Երկրորդ մասում ներկայացված են արդյունքները: Երրորդ մասում ներկայացված է արդյունքների ամփոփում և խորհրդատվություն՝ հետագա անհրաժեշտ վերլուծությունների համար:

I ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿ

Աշխատանքները իրականացվել են հիմնվելով դպրոցների վարկանիշավորման 2016թ. և 2015թ. տվյալների վրա: Վերլուծության ծածկույթը ներառում է շուրջ **1,379** դպրոցի, **34,991** ուսուցչի և **352,416** աշակերտի տվյալ:

Աշակերտների կրթական արդյունքները սահմանվել են երկու խումբ ցուցանիշներով՝

1) հայոց լեզու, մաթեմատիկա և բնագիտություն առարկաների տարեկան ավարտական և միասնական քննությունների միջին գնահատականներ,
2) հաջորդ կրթական մակարդակում կրթությունը շարունակող աշակերտների քանակ:

Կրթական ձեռքբերումների վրա իրենց ազդեցությունն են թողնում այնպիսի գործոններ, ինչպիսիք են ուսուցիչների կրթությունը, տարիքը, նախընտրությունները: Այս հանգամանքը բազմիցս ապացուցվել է միջազգային այնպիսի հեղինակավոր հետազոտություններում ինչպիսիք են TIMSS, PIRLS, PISA: Աշակերտների արդյունքի վրա

միջավայրային ազդեցության գործոնները սահմանվել են ուսուցիչների բնութագրիչներով՝ մասնավորապես, կրթական աստիճանով և տարակարգի առկայությամբ: Առանձնացվել են հետևյալ փոփոխականները՝

1) մանկավարժական կրթություն չունեցող ուսուցիչների թիվ,
2) մանկավարժական կրթություն ունեցող ուսուցիչների թիվ,
3) գիտական աստիճան ունեցող ուսուցիչների թիվ,
4) տարակարգ ունեցող ուսուցիչների թիվ:

Որոշ վերապահումներով՝ աշակերտների կրթական արդյունք, դպրոցի միջավայրը հաշվի առնելով, կարելի է համարել նաև օլիմպիադաներին մասնակցող աշակերտների քանակը: Վերապահումները վերաբերում են հանրակրթության և օլիմպիադաների նպատակների տարբերությանը: Չնայած դրան, վերլուծության մեջ դիտարկվել են նաև օլիմպիադաները:

Վերլուծության մեջ անդրադարձ է կատարվել նաև դպրոցի կառավարմանը վերաբերող գործոնների և աշակերտի կրթական արդյունքի հետ կապին: Մասնավորապես դիտարկվել է դպրոցում իրականացվող ծրագրերի քանակը և բյուջեի պլանավորումը:

Վերլուծության ընթացքում կիրառվում են են որոշ հասկացություններ, որոնք կարող են անծանոթ լինել ընթերցողին: Խնդրում ենք ծանոթանալ հետևյալ ուղեցույցին:

Նշանակալի կապ – հավանականություն, որ հայտնաբերված կորելացիոն կապը կարող է բացակայել վերլուծված հանրույթից միայն որոշ տոկոսի մոտ: Օրինակ, եթե նշանակալիությունը 0,05 է, նշանակում է 100 վերլուծված աշակերտից միայն 5-ի մոտ կարող է կապը բացակայել: Մյուս դեպքերում կապը առկա է: Սոցիալական հետազոտություններում 0,05 նշանակալիությունը համարվում է ընդունելի:

Ուժեղ կապ – երկու տարբեր գործոնների միջև կապի ուժի գործակից: Սոցիալական հետազոտություններում 0,4 գործակիցը համարվում է շեմային: Դրանից ցածր գործակիցը համարվում է թույլ:

Կապերը կարող են ունենալ երկու բնույթ՝ դրական և բացասական: Կապը դրական է, եթե մեկ գործոնի աճը հանգեցնում է մյուսի աճին և հակառակը, նվազումը հանգեցնում է նվազմանը: Այս կապը նշվում է դրական թվով: Օրինակ՝ 0,5: Կապը բացասական է, եթե

մեկ գործոնի նվազումը հանգեցնում է մյուսի աճին կամ աճը հանգեցնում է մյուսի նվազմանը: Այս կապը նշվում է բացասական թվով: Օրինակ՝ - 0,5:

Զրոյական կապ կամ կապի բացակայություն – Գործոնների միջև կապ կարող է ընդհանրապես չդիտարկվել: Այս դեպքում կապը զրոյական է կամ բացակայում է:


Որպեսզի համարենք, որ երկու գործոնների միջև առկա է կապ, ապա պետք է բավարարվեն հետևյալ պայմանները՝ նշանակալիության և կապի գործակցի բավարար մակարդակներ:

II ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Առարկայական միջին գնահատականներ և ուսուցչի բնութագրիչներ

Ստորև ներկայացված են 3 առարկաների տարեկան ավարտական և միասնական քննության դպրոցական միջին գնահատականների կապը միջավայրային գործոնների՝ մասնավորապես ուսուցչի բնութագրիչների հետ: Գրաֆիկներում ներկայացված են արդյունքներն ըստ գյուղական և քաղաքային բնակավայրերի: * և ** նշանները վիճակագրական նշանակալիության ցուցանիշներն են:


Գրաֆիկ 1



* 0,05 նշանակալիություն
** 0,01 նշանակալիություն

Հայոց լեզվի տարեկան միջին գնահատականի կապը ուսուցչի բնութագրիչների հետ թույլ է ինչպես քաղաքային, այնպես էլ գյուղական բնակավայրերում: Ավելին, նշանակալի կապերը գրեթե բացակայում են: Որոշակի կապ և նշանակալիություն նկատվում է միայն գիտական աստիճան ունեցող ուսուցիչների պարագայում:

Գրաֆիկ 2




* 0,05 նշանակալիություն
** 0,01 նշանակալիություն

Հայոց լեզվի տարեկան միջին գնահատականի կապը ուսուցչի բնութագրիչների հետ թույլ է ինչպես քաղաքային, այնպես էլ՝ գյուղական բնակավայրերում: Ի տարբերություն 2016 թվականի տվյալների՝ այստեղ նշանակալի կապերը համեմատաբար ավելի շատ են:

Մանկավարժական կրթություն չունեցող ուսուցիչների հետ կապը բացասական է ինչպես 2016, այնպես էլ 2015 թվականի համար. որքան շատ են այս խմբի ուսուցիչները, այնքան ցածր են արդյունքները:


Ընդհանուր առմամբ, հայտնաբերված կապերից ելնելով կարելի է պնդել, որ հայոց լեզվի ուսուցիչների կապը շատ թույլ է այդ առարկայում աշակերտի ունեցած ձեռքբերումների հետ:

Գրաֆիկ 3



* 0,05 նշանակալիություն
** 0,01 նշանակալիություն

Գրաֆիկ 4




* 0,05 նշանակալիություն
** 0,01 նշանակալիություն

Ի տարբերություն 2016 թվականի միասնական քննության միջին գնահատականների՝ ուսուցչական բնութագրիչները ունեն 2 նշանակալի կապ, սակայն այդ կապերի ուժը շատ թույլ է:

Կարելի է պնդել, որ վիճակագրական նշանակալիության բացակայության պայմաններում ուսուցիչների կապը միասնական քննության գնահատականների հետ զրոյական է:

Գրաֆիկ 5



* 0,05 նշանակալիություն
** 0,01 նշանակալիություն


Բնագիտության գնահատականների հետ ուսուցչական բնութագրիչները նշանակալի կապով կապված են միայն մանկավարժական կրթություն չունեցող ուսուցիչների դեպքում:

Մյուս բոլոր դեպքերում նշանակալի կապի բացակայությունը թույլ է տալիս ենթադրել զրոյական կապի մասին, առհասարակ, բնագիտության ուսուցիչների բնութագրիչների և արդյունքների միջև:

Բնագիտության գնահատականների հետ ուսուցչական բնութագրիչները նշանակալի կապով կապված են միայն մանկավարժական կրթություն չունեցող ուսուցիչների դեպքում:

Մյուս բոլոր դեպքերում նշանակալի կապի բացակայությունը թույլ է տալիս ենթադրել զրոյական կապի մասին, առհասարակ, բնագիտության ուսուցիչների բնութագրիչների և արդյունքների միջև:

Գրաֆիկ 6




* 0,05 նշանակալիություն
** 0,01 նշանակալիություն

Միասնական քննության միջին գնահատականների հետ ուսուցչական բնութագրիչների նշանակալի կապը առհասարակ բացակայում է: Այս միտումը նկատվել է նաև հայոց լեզվի դեպքում:


Բնագիտության արդյունքները 2015 թվականին չեն հավաքագրվել:

Գրաֆիկ 7



* 0,05 նշանակալիություն
** 0,01 նշանակալիություն

Գրաֆիկ 8




* 0,05 նշանակալիություն
** 0,01 նշանակալիություն

Ինչպես 2016, այնպես էլ 2015 թվականի տվյալներում մաթեմատիկա առարկայի պարագայում դիտարկվում է ավելի ուժեղ կապ ուսուցչական բնութագրիչների հետ: Բացասական կապ է դիտարկվում մանկավարժական կրթություն չունեցող ուսուցիչների հետ:

Այնուամենայնիվ, կապը շատ թույլ է, որը կարող է պայմանավորված լինել կիրառված տվյալների բնույթով: Այս հարցին առանձին կադրադառնանք ամփոփման մեջ:


Գրաֆիկ 9



* 0,05 նշանակալիություն
** 0,01 նշանակալիություն

Միասնական քննության միջին գնահատականների հետ ուսուցչական բնութագրիչների նշանակալի կապը առհասարակ բացակայում է: Այս միտումը նկատվել 2016 թվականի տվյալներում՝ հայոց լեզվի և բնագիտության դեպքում:

Գրաֆիկ 10




* 0,05 նշանակալիություն
** 0,01 նշանակալիություն

2015 թվականի տվյալներում նշանակալի կապերը համեմատաբար ավելի շատ են, սակայն կապի ուժը թույլ է:

Կրթության շարունակելիության ապահովում

Ստորև ներկայացված արդյունքների խումբը դիտարկում է կրթության շարունակելիության և ուսուցչական բնութագրիչների կապը:

Գրաֆիկ 11




* 0,05 նշանակալիություն
** 0,01 նշանակալիություն

Տարակարգ ունեցող ուսուցիչների քանակը դպրոցում շատ թույլ է կապված ուսումը նախնական և միջին մասնագիտական հաստատություններում շարունակելու հետ: Գիտական աստիճանի դեպքում կապը նույնպես թույլ է, չնայած նրան, որ քաղաքային բնակավայրերում առկա է նշանակալիության բարձր մակարդակ:

Մանկավարժական կրթություն չունեցող ուսուցիչները քաղաքային բնակավայրերում նշանակալի և համեմատաբար ուժեղ կապով են կապված կրթության շարունակականության հետ: Հնարավոր է տարածաշրջանային պատճառականություն:

Հետաքրքրական է նաև բարձրագույն կրթություն ունեցող ուսուցիչների կապը ուսումը նախնական և միջին մասնագիտական հաստատություններում շարունակելու հետ: Գյուղական համայնքներում բարձրագույն կրթությամբ ուսուցիչները ուժեղ և նշանակալի կապով կապված են ուսման շարունակականության հետ, իսկ քաղաքային համայնքներում ընդհակառակը կապը բացասական է:

Գրաֆիկ 12




* 0,05 նշանակալիություն

** 0,01 նշանակալիություն

2015 թվականի տվյալներում նշանակալի կապերը քիչ են: Մանկավարժական կրթությամբ ուսուցիչների կապը ուսման շարունակելիության հետ ավելի ուժեղ է քաղաքային բնակավայրերում քան 2016 թվականի տվյալներում: Այս հանգամանքը լրացուցիչ ուսումնասիրության կարիք ունի:

Հիմնվելով կապի ուժի վրա կարելի է պնդել, որ իրական տարբերություններ կան միայն մանկավարժական կրթություն ունեցող և բարձրագույն կրթություն չունեցող ուսուցիչների միջև:

Գրաֆիկ 13




* 0,05 նշանակալիություն

** 0,01 նշանակալիություն

Տարակարգ ունեցող ուսուցիչների և գիտական աստիճան ունեցող ուսուցիչների քանակը քաղաքային բնակավայրերի դպրոցներում ուժեղ և նշանակալի կապով կապված է ուսումը բուհում շարունակելու: Գյուղական բնակավայրերում այդ կապը նշանակալի է, բայց թույլ՝ բացառությամբ բարձրագույն կրթությամբ ուսուցիչների խմբի:

Մանկավարժական կրթության բացակայությունը ինչպես նախորդ դեպքերում այստեղ նույնպես բացասական թույլ կապով է կապված շարունակելիության հետ:

Գրաֆիկ 14




* 0,05 նշանակալիություն

** 0,01 նշանակալիություն

2015 թվականի տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ մանկավարժական կրթություն չունեցող ուսուցիչների կապը ուսման շարունակելիության հետ ուժեղացել է՝ 2015-2016 թվականներին: Պահպանվել է մանկավարժական կրթությամբ ուսուցիչների ազդեցությունը:

Այս գրաֆիկները նույնպես հաստատում են մեր ենթադրությունը, որ իրական տարբերություններ դիտարկվում են մանկավարժական կրթություն ունեցող և չունեցող ուսուցիչների միջև:


Գրաֆիկ 15



* 0,05 նշանակալիություն

** 0,01 նշանակալիություն

Գրաֆիկ 16



* 0,05 նշանակալիություն

** 0,01 նշանակալիություն


Ինչպես 2016, այնպես էլ 2015 թվականի տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ տարակարգ ունեցող ուսուցիչների և գիտական աստիճան ունեցող ուսուցիչների

քանակը դպրոցում ուժեղ և նշանակալի կապով կապված է ուսումը բուհում շարունակելու հետ՝ քաղաքային բնակավայրերում:

Մանկավարժական կրթության բացակայությունը այստեղ նույնպես բացասական թույլ կապով է կապված շարունակականության հետ:

Հաշվի առնելով բուհ ընդունվելու գործընթացում կրկնուսույցների ազդեցությունը մենք կապերի նման բաշխվածությունը տեսնում ենք հենց այդ համատեքստում:

Գրաֆիկ 17




* 0,05 նշանակալիություն

** 0,01 նշանակալիություն

Միջին մասնագիտական և նախնական մասնագիտական ուսումնական հաստատություններում ուսումը շարունակող աշակերտների թիվը նշանակալի կապով կապված չէ ուսուցչական բնութագրիչների հետ: Թույլ բայց նշանակալի կապ նկատվում է միայն գիտական աստիճան ունեցող ուսուցիչների քանակի հետ:

Գրաֆիկ 18



* 0,05 նշանակալիություն

** 0,01 նշանակալիություն

Ի տարբերություն 2016 թվականի տվյալների 2015-ի տվյալներում նշանակալի կապերը ավելի շատ են: Ուրվագծվում է մանկավարժական կրթություն ունեցող ուսուցիչների և շարունակականության միջև առկա կապը:

Օլիմպիադաների մասնակցություն և ուսուցչի բնութագրիչներ

Աղյուսակ 1

2016								
ՕԼԻՄՊԻԱԴԱ	Տարակարգ ունեցող ուսուցիչներ		Գիտական աստիճան ունեցող ուսուցիչներ		Մանկավարժական կրթություն չունեցող ուսուցիչներ		մանկավարժական կրթություն ունեցող ուսուցիչներ (բուհ Եվ միջին)	
	Քաղաք	Գյուղ	Քաղաք	Քաղաք	Քաղաք	Գյուղ	Քաղաք	Գյուղ
ՄԱՐԶԱՅԻՆ	0,27**	0,07*	0,16**	0,09*	0,09*	0,10**	0,08	0,15**
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ	0,23**	0,09**	0,10*	0,05	0,05	0,02	0,05	0,16*
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ	0,10*	0,10**	0,15**	0,02	0,02	-0,04	0,05	0,03

* 0,05 նշանակալիություն

** 0,01 նշանակալիություն

Աղյուսակ 2

2015								
ՕԼԻՄՊԻԱԴԱ	Տարակարգ ունեցող ուսուցիչներ		Գիտական աստիճան ունեցող ուսուցիչներ		մանկավարժական կրթություն չունեցող ուսուցիչներ		մանկավարժական կրթություն ունեցող ուսուցիչներ (բուհ Եվ միջին)	
	Քաղաք	Գյուղ	Քաղաք	Գյուղ	Քաղաք	Գյուղ	Քաղաք	Գյուղ
ՄԱՐԶԱՅԻՆ	0,44**	0,13*	0,76**	0,39**	0,36**	-0,04	0,09*	0,19**
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ	0,22**	0,08*	0,38**	0,31**	0,04	-0,07*	0,05	0,18**
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ	0,25**	0,03	0,38**	0,17**	0,04	-0,03	0,02	0,04

* 0,05 նշանակալիություն

** 0,01 նշանակալիություն

Ընդհանուր առմամբ երկու տարիների (2016, 2015) տվյալների ուսուցչական բնութագրիչները կապված են օլիմիպիադաներին մասնակցող աշակերտների թվի հետ թույլ կապով, սակայն բոլոր այդ կապերը նշանակալի են: Հաշվի առնելով օլիմպիադաների և հանրակրթության նպատակների տարբերությունը այս արդյունքները հետաքրքրական են և կարիք ունեն հավելյալ ուսումնասիրության:

Աղյուսակ 3

2016						
ԲՅՈՒՋԵԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ	ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ		ՄԱԹԵՄԱՏԻԿԱ		ԲՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	
	ՏԱՐԵԿԱՆ	*ՄԻԱՍՆԱԿԱՆ*	*ՏԱՐԵԿԱՆ*	*ՄԻԱՍՆԱԿԱՆ*	*ՏԱՐԵԿԱՆ*	*ՄԻԱՍՆԱԿԱՆ*
ԸՆԴԱՄԵՆԸ	-0,06	0,03	-0,07	-0,00	-0,07	0,02
ՆԱԽԱՀԱՇԻՎ	-0,06	-0,03	-0,07	-0,06	-0,05	0,01
ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ	-0,01	0,04	-0,01	-0,02	-0,01	0,02
ՄԵԿ ԱՇԱԿԵՐՏԻ ԾԱԽՍ	0,016	-0,060*	,028	,005	,038	-,068*

* 0,05 նշանակալիություն

** 0,01 նշանակալիություն

Աղյուսակ 4

2015				
ԲՅՈՒՋԵԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ	ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ		ՄԱԹԵՄԱՏԻԿԱ	
	ՏԱՐԵԿԱՆ	*ՄԻԱՍՆԱԿԱՆ*	*ՏԱՐԵԿԱՆ*	*ՄԻԱՍՆԱԿԱՆ*
ԸՆԴԱՄԵՆԸ	0,05	0,03	-0,08	-0,01
ՆԱԽԱՀԱՇԻՎ	-0,03	-0,05	-0,05	-0,05
ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ	-0,01	0,06	-0,01	-0,04
ՄԵԿ ԱՇԱԿԵՐՏԻ ԾԱԽՍ	0,01	-0,06	0,03	0,005

* 0,05 նշանակալիություն

** 0,01 նշանակալիություն

Բյուջեի կառուցվածքի ոչ մի միավոր ուժեղ կապով կապված չէ աշակերտների արդյունքների հետ:

Աղյուսակ 5

2016						
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐ	ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ		ՄԱԹԵՄԱՏԻԿԱ		ԲՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	
	ՏԱՐԵԿԱՆ	ՄԻԱՍՆԱԿԱՆ	ՏԱՐԵԿԱՆ	ՄԻԱՍՆԱԿԱՆ	ՏԱՐԵԿԱՆ	ՄԻԱՍՆԱԿԱՆ
ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ՔԱՆԱԿ	0,06	,12*	0,10	0,07	0,08	0,00
ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻ ՔԱՆԱԿ	0,03	0,09	0,03	0,03	0,01	0,07
ԴՊՐՈՑ-ԲՈՒՀ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐ	0,01	0,08	0,09	0,07	-0,02	0,07
ՈՒՍՈՒՑԻՉ/ԱՇԽԱՏԱԿԱԶՄ	,03	-,01	,07**	,01	-,00	-,01

* 0,05 նշանակալիություն

** 0,01 նշանակալիություն

Դպրոցներում իրականացվող ծրագրերը նշանակալի կապով կապված չեն առարկայական գնահատականների հետ: Կարելի է ենթադրել, որ այդ ծրագրերը նպատակադրման լուրջ խնդրիր ունեն:

Աղյուսակ 6

2015				
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐ	ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ		ՄԱԹԵՄԱՏԻԿԱ	
	ՏԱՐԵԿԱՆ	ՄԻԱՍՆԱԿԱՆ	ՏԱՐԵԿԱՆ	ՄԻԱՍՆԱԿԱՆ
ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ՔԱՆԱԿ	0,04	0,15	0,15	0,07
ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻ ՔԱՆԱԿ	0,05	0,09	0,04	0,03
ԴՊՐՈՑ-ԲՈՒՀ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐ	0,02	0,08	0,09	0,07
ՈՒՍՈՒՑԻՉ/ԱՇԽԱՏԱԿԱԶՄ	0,02	0,01	0,06	0,03**

* 0,05 նշանակալիություն

** 0,01 նշանակալիություն

ՏՎՅԱԼՆԵՐԻ ԲԱԶԱՅԻ ՈՐՈՇ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ

Մինչ տվյալների արդյունքների վերլուծության ամփոփումը հարկ է նշել, թե ինչպիսի սահմանափակումներ ունի կիրառված տվյալների բազան:

Կրթական արդյունքները, որոնք կիրառվել են այս վերլուծության մեջ իրենցից ներկայացնում են դպրոցի միջին թվաբանական գնահատական, որոնք ձևավորվել են տարեկան ավարտական և միասնական քննության գնահատականներից: Միջին թվաբանականը զգայուն է կրիտիկական նշանակությունների նկատմամբ և կարող է մի քանի շատ բարձր կամ ցածր գնահատականի դեպքում էականորեն փոխվել: Այս հանգամանքը ազդում է վիճակագրական մոդելների զգայունության վրա և դրանք ավելի կոպիտ է դարձնում: Արդյունքում ստացվում է ցածր նշանակալիություն կամ թույլ կապ, այն դեպքում երբ իրականանում այդ կապը ավելի ուժեղ է:

Երկրորդ կարևոր սահմանափակումը կապված է վերլուծության մակարդակի հետ: Առկա տվյալները թույլ են տալիս վերլուծություն անել միայն դպրոցի մակարդակում և թույլ չեն տալիս դիտարկել աշակերտների անձնական ձեռքբերումները:

Առկա խնդիրները լուծվելու են մեր հետագա վերլուծություններում, որտեղ կիրառվելու է աշակերտներից յուրաքանչյուրի կրթական արդյունքը՝ մասնավորապես միջինացված դպրոցական գնահատականի փոխարեն լինելու են աշակերտի անձնական միասնական գնահատականները:

Հաշվի առնելով վերոնշյալ սահմանափակումները առաջարկում ենք արդյունքներին վերաբերվել, որպես ընդհանուր պատկերը արտացոլելու գործիք, որը կարող է կողմնորոշիչ նշանակություն ունենալ քաշաքականություն մշակողների համար: Ցանկալի է այդ գործընթացում կիրառել նաև հավելյալ հետազոտություններ իրականացնելու հնարավորությունները:

III ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Աշակերտների կրթական արդյունքի և միջավայրային մի շարք գործոնների կորելացիոն վերլուծությունը հանգեցրել է հետևյալ հիմնական հետևություններին:

Հայոց լեզու և բնագիտություն առարկաների տարեկան ավարտական գնահատականի կապը կրթական տարբեր աստիճաններ և տարակարգ ունեցող ուսուցիչների հետ շատ թույլ է: Նշանակալիություն այդ կապերի միջև գրեթե չի դիտարկվում: Համեմատաբար ավելի շատ են նշանակալի կապերը 2015 թվականի տվյալներում:

Նկատվում է հստակ տարբերություն մանկավարժական կրթություն ունեցող և միայն բարձրագույն կրթություն ունեցող ուսուցիչների արդյունքների միջև ինչպես 2016, այնպես էլ 2015 թվականի վերլուծության մեջ: Մանկավարժական կրթություն ունեցող ուսուցիչների քանակը ուժեղ կապով կապված է կրթության շարունակականության հետ:

Տարակարգ ունեցող ուսուցիչների քանակը կապված է բուհում կրթությունը շարունակելու որոշման հետ քաղաքային համայնքներում, իսկ գյուղական համայքներում բուհում կրթությունը շարունակելու որոշումը ուժեղ կապով կապված է բարձրագույն կրթություն ունեցող ուսուցիչների քանակի հետ: Կարելի է ենթադրել, որ այս խմբերի ուսուսցիչները առավել ակտիվ ուսուցիչներ են և իրականացնում են կրկնուսույցի գործունեություն: Հարցը առավել խորքային ուսումանսիրության կարիք ունի:

Օլիմպիադաներում աշակերտների մասնակցությունը և ուսուցչի բնութագրիչները նշանակալի կապերով կապված են իրար: Չնայած այն հանգամանքին, որ կապերը թույլ են, այնուամենայնիվ դա կարող է վկայել այն մասին, որ դպրոցներում կրթությունը ունի օլիմիական բնույթ և չի ծառայում կյանքի համար հմտություններ ձևավորելու հանրակրթության նպատակին:

Դպրոցներում իրականացվող ծրագրերը և բյուջեի պլանավորումը (ներառյալ մեկ աշակերտի հաշվով ծախս) կապված չեն կրթական արդյունքի հետ: Այս հանգամանքը հավելյալ ուսումնասիրության կարիք ունի և պետք է գտնվի ուշադրության կենտրոնում, քանի որ դրանց ճիշտ պլանավորումը և նպատակադրումը կարող են էականորեն բարձրացնել կրթության արդյունավետությունը:

Գրեթե բոլոր նշված կետերով կարիք կա հավելյալ, ավելի խորքային և համապարփակ վերլուծության: Այդ վերլուծությունները կողմնորոշելու համար այս արդյունքները կարող են լուրջ հիմք ծառայել և սահմանել հիմնական ուղղությունները: